

ՖՐԻԿԻ ԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

XIII դ. նշանավոր տաղասաց Ֆրիկի անվան ծագման մասին հայ բանասիրության մեջ տարբեր կարծիքներ կան: Նրա անձի, ստեղծագործության, կյանքի ու ընդհանուր գործունեության հարցերով զբաղվողները Ֆրիկ անունը մեծ մասամբ գրական կեղծանուն համարելով՝ վերջնականորեն չեն պարզել, թե այն որտեղից է գալիս և ի՞նչ է նշանակում:

Ֆրիկի գրական ժառանգությունն ի մի բերող ու ամբողջացնող, ֆրիկագիտության ամենամեծ երախտավոր, բանասեր Տիրայրը, ներկայացնելով Ֆրիկ անվան ծագմանը վերաբերող բոլոր՝ հավանական ու ոչ հավանական կարծիքները¹, գտնում է, որ դրանք, այնուամենայնիվ, «վարկածներ են, որոնց լուծումն ապագային է վերապահած, նոր տվյալների և փաստերի հիման վրա կերտելով վախճանական վճիռը»²:

Այդ վարկածների մեջ առանձնապես ուշագրավ են ու կարևոր երեքը: Առաջինն այն է, որ Ֆրիկ անունը կարող է առաջ եկած լինել եվրոպական Ֆրեդերիկ անունից՝ Ֆետրիկ>Ֆտրիկ>Ֆրիկ ձևափոխությամբ³: Երկրորդը՝ Ֆրիկ անունը բխցվում է ֆոռալ (աշ. ինքն իր վրա պտույտ գալ, կլոր-կլոր պտույտներ անել: 2. Ցուր առանցքի վրա դառնալ)⁴ բայից (հմմտ. ֆոֆոալ) և հանգեցվում դրա բնաձայնական ծագում ունեցող ֆոռ (ֆրո>*ֆր) արմատից կաղմված ֆրոիկ>*ֆրիկ (հմմտ. ֆոֆոիկ, ֆրոֆրիկ) ձևին, որ իբրև թե թափառիկ, թափառաշրջիկ, աստանդական է նշանակում⁵: Ըստ երրորդ կարծիքի էլ այն կարող է գաժառում պահպանված ֆեռիկ (սուրահաս ցորենի հասկերից պատրաստած բովածի)՝ բառը լինել, որ նաև ֆրիկ ձևով է գործածվում⁶:

Արդ՝ եթե բանասեր Տիրայրը այդ երեք և մյուս կարծիքներն իբրև վարկածներ է ներկայացնում, ապա ուրիշները դրանցից մեկնումեկն ընդունելով՝ դա էլ համարում են ճիշտ ու հավաստի: Անվանի հայագետ Հր. Աճառյանը, օրինակ, Ֆրիկ-ը հանում է Ֆրեդերիկ անունից և ի հաստատումն դրա նշում, որ «Մին. համդ. 137 կայսեր անունը գրում է Ֆտրիկ փխ. Փրետերիկ»⁷: Այդպես է կարծում նաև Մ. Աբեղյանը, ասելով. «Զի հիմնավորված այն կարծիքը, թե «Ֆրիկ» անունը բանաստեղծի իսկական անունը չէ, այլ «բանաստեղծական անունը» կամ կեղծ անունը: Այդ պարզապես մի անձնանվան նվազական ձև է, թերևս, ինչպես կարծել են, Ֆրեդերիկ անվան»⁸: Պատմաբան Ա. Աբրա-

1 Տիրայր, Մոռացված մի հայ երգիչ («Արարատ», էջ 164-ին, 1918, № Ա-Գ, էջ 195—198), նույնի՝ Ֆրիկ—Դիվան (Ուսումնասիրություն Ֆրիկի), Նյու Յորք, 1952, էջ 85—97. վերջինում դրանք համարված ու ընդարձակ են տրված:

2 Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 97:

3 Նույն տեղում, էջ 88—87:

4 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Երևան, 1945, էջ 629:

5 Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 94—95:

6 Նույն տեղում, էջ 90—91:

7 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 253:

8 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 290:

համայնը ավելի հավանական ու ընդունելի է համարում Ֆրեկ, Ֆրեֆրիկ (պատող, թափառող) բառից Ֆրիկ անվան ծագած լինելու տեսակետը⁹։ Ուրիշներն էլ պարզապես ընդունում են, որ Ֆրիկ-ը լեհական հասցեական ցուցանիշ է նշանակում։ «Ֆրիկի իսկական անուն-ազգանունը,— կարողում ենք միջնակարգ դպրոցի «Հայ գրականության» դասագրքում,— մեզ հայտնի չէ։ Ֆրիկ անունը բանաստեղծի դրական անունն է, որը կրիլիկյան հայերի բարբառով նշանակում է խանձված դեռահաս ցորեն»¹⁰։

Այսպիսով, Ֆրիկի անվան ծագման մասին ոչ միայն մի ընդհանուր միասնական տեսակետ գոյություն չունի, այլև եղածներն էլ որոշակի փաստերով ու անհրաժեշտ չափով չեն հիմնավորված և վարկածներից այն կողմ, իսկապե՛ս, չեն անցնում։ Այդ պատճառով առանձին կարևորություն է ստանում Ֆրիկ անվան ծագման բացատրությունը, որը կարող է որոշ լույս սփռել բանաստեղծի կյանքի մուժ էջերի վրա։ Իսկ Ֆրիկի կենսագրության մեջ, դժբախտաբար, շատ ու շատ են մուժ էջերը։

Ֆրիկի գոյության մասին, ինչպես հայտնի է, առաջին տեղեկությունը Ղ. Ալիշանն է հաղորդում։ Ուսումնասիրելով միջնադարյան մի շարք տաղասացների ստեղծագործությունները, նա կազմել է Երզարան¹¹, որի ձգվածությունը աղբյուրներն են Ֆրիկ քերթողի ոտանավորներն» և որոնց ցանկի վրա էլ գրված է. «Ոտանաւոր ասացեալ է Ֆրիկն որդի Թագվաշին Նղբորորդի Դոդոնոյի, ի վերայ իւր մեղացն, ի վանս բանասիրաց» վերնագիրը¹²։

Ուշագրավ է, որ Հոռոմով 1936 թ. Ն. Ակինյանի հայտնաբերած № 24 հայերեն ձեռագիրը (XIV դ.) ոչ միայն 5 տաղ է («Յործում մահն մաւտենայ...», «Այլ է համասփիր ծաղիկն...», «Անձն իմ զինչ ուրախ ես դու...», «Մարդուն տալէհն ես պուտեն...», «Է՛ֆալաք երբ ծոխս մարդուն...») պարունակում Ֆրիկից, այլև նրա մասին նույն հիշատակությունն է անում։ «Ոտանաւոր ասացեալ է Ֆրիկն որդի Թագվաշին, եղբայր որդի Դոդոնոյի ի վերայ իւր մեղացն, ի վարս բանայսիրաց»¹³։

Սրանք Ֆրիկի կենսագրության, թերևս միակ, վավերագրերն են, որտեղ նշված Թագվաշ և Դոդոնոյ անունները նույնպես այլ կերպ են մեկնաբանվել։ Բանասեր Տիրայրը հակամետ է կարծելու, որ Թագվաշ-ը ո՛չ թե արական, այլ իգական անուն է, որ դա կապվում է Թագուշ անվան հետ, և հետևաբար՝ Ֆրիկն էլ հայտնի է եղել ոչ թե հոր, այլ յուր մոր անունով¹⁴։

Գրականագետ Ա. Մկրտչյանը գրում է, թե «Ղևոնդ Ալիշանի տեղեկության համաձայն Ֆրիկը մի անհայտ մարդու՝ Դոդոնոյի եղբորորդի Թագվաշի

⁹ Ա. Աբրահամյան, Ֆրիկի «Դիվանի» հրատարակության առթիվ, «Էջմիածին», 1954, № 1, էջ 33։

¹⁰ Մ. Մկրտչյան, Հայ գրականություն (դասագիրք միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար), Երևան, 1959, էջ 96։

¹¹ Ն. Ա. Ղազիկյան, Հայկական երգի մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, Առաջին հատոր, Ա—Մ, Վենետիկ, 1909, էջ 63, Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 8. տողատակում Տիրայրը հայտնում է, թե՛ 1911 թ. աշնան, երբ Ս. Ղազարի մենաստանի մատենադարանի մեջ զբաղված էինք Ֆրիկի տաղերի ի մի ժողովելու գործով, մեր բազմաթիվ դիմումները՝ տեսնել այդ քաղաքը, մերժման միայն արժանացան. ի վերջո՝ «Կորսված է» հայտարարեցավ մատենադարանագետ Ն. Աթանասի կողմից, խնդրել փակելու նպատակով։ Եվ թե՛ այդ քաղաքն իսկապես չի կորսվել, ապա երբեք՝ նպատակարար է բերել ֆրիկագիտությունը։

¹² Ն. Ա. Ղազիկյան, նշվ. աշխ., էջ 63, հմտ. Ղ. Ալիշան, Յուզիկը հայերենաց, Կ. Ս. Վենետիկ, 1870, էջ 125։

¹³ ՏճԻՆ Կ. Ներսես վ. Ակինյան, Յուզիկ հայերեն ձեռագրաց Հոռոմի հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս և Բահ. Լեւոնեան հայ վարժանի, Վիեննա, 1961, էջ 24։ Այս հիշատակարանում նախորդի «Թագվաշին», «եղբորորդին» և «ի վանս» ձևերի փոխարեն գործածված են՝ Թագվաշին, եղբայր ուղիք և ի վարս։

¹⁴ Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 129։

զավակն էր...»¹⁵, և այնպես է ստացվում, որ ոչ թե Ֆրիկը, այլ Թագվոշն է Դոգոնոյի եղբորորդին՝ Հակասական բացատրություններ է տալիս նաև Հր. Աճառյանը. նա Ֆրիկ գլխաբառի տակ Ֆրիկին ներկայացնում է «որդի Թագվոշի, եղբորորդի Դոգոնոյի» ձևով¹⁶, իսկ Դոգոնոյ և Թագվոշ անձնանունների բաժնում Դոգոնոյին Ֆրիկի հայրն է համարում, հմմտ. «ԴՈԴՈՆՈՅ, ար. ծագումն անհայտ. մի անգամ վկայված է Ժե դարից և է՝—Դոգոնոյ, հայր Ֆրիկի՝ նշանավոր բանաստեղծի Ժե դարում»¹⁷ և «ԹԱԳՎՈՇ, ար. ծագումն ինձ անհայտ: Այս անունով գիտեմ միայն՝—Թագվոշ ոմն, որի եղբորորդի Դոգոնոյի որդին է նշանավոր տաղասաց Ֆրիկը (Ժե գա՛ր)»¹⁸:

Մ. Աբեղյանի, Ա. Ղանալանյանի և ուրիշների կարծիքով էլ Թագվոշը Ֆրիկի հայրն է, իսկ Դոգոնոյ-ն՝ հորեղբայրը¹⁹, «որոնց մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդել Ալիշանը, և ուրիշներն էլ չեն գտել ցայժմ»²⁰:

Կենսագրական այն սուղ տեղեկությունը, որ Ղ. Ալիշանը, ըստ երևույթին, վերցրել է ավելի հին, գուցե հենց բանաստեղծի տաղերի՝ սեփական ձեռագիր-օրինակից, տարբեր կերպ է մեկնաբանվել՝ Ֆրիկի վերաբերյալ էր ձեռքի տակ ունեցած նյութերի հիման վրա Ղ. Ալիշանը գրում է. «Բարակ զգացման և ուղիղ մտաց տեր, նաև ճարտար տաղաչափ պեսպես վանկերով քերդող մը կա՝ Ֆրիկ, որդի Թագվոշի եղբորորդի Դոգոնոյի, որուն բուն ժամանակն որոշակի հայտ չէ»²¹, Այստեղ, ինչպես տեսնում ենք, Թագվոշ-ից հետո որևէ կետագրական նշան չկա, և այն կարող էր, իհարկե, հատկացուցիչ ըմբռնվել, և համապատասխանաբար՝ Դոգոնոյ-ն՝ եղբորորդին, իսկ Ֆրիկը Դոգոնոյի որդին համարվել: Բայց Ղ. Ալիշանի Երգարանից Ա. Ղազիկյանի կատարած ուղղակի մեջբերումը, որտեղ Թագվոշի-ի փոխարեն՝ Թագվոշին, եղբորորդի-ի փոխարեն՝ Եղբորորդին է գրված, ցույց է տալիս, որ Ֆրիկը Թագվոշի որդին և Դոգոնոյի եղբորորդին է: Հստ այդպիսի սխալվում է, անշուշտ, նաև Տիրայրը, երբ Թագվոշ-ը Թագուշ իգական անվան հետ կապելով՝ այն Ֆրիկի մոր անունն է համարում:

Հայ մատենագրության մեջ առաջին անգամ հանդիպող և հայերի մեջ հազվագյուտ գործածվող Թագվոշ անունը արական անուն է և ամենայն հավանականությամբ առաջ է եկել Թագուհուց||Թագվոշան անձնանունից՝ հնչյունների անկման ճանապարհով²², Հավանաբար, այդպես է առաջ եկել նաև ոչ պակաս անսովոր Դոգոնոյ անունը, որի հիշատակությամբ էլ մատնացույց է արվում, որ Ֆրիկը պարզապես ժամանակին ճանաչված, ինչ-որ համարում ունեցող մարդու եղբորորդի է եղել:

Անդրադանայով Ֆրիկ անվանը, պետք է ասել, որ դա շատ ավելի անսովոր ու բացառիկ անուն է և հեռավոր անցյալում՝ եղած լինել չէր կարող: Ձ-ով սկսվող կամ իրենց՝ կազմում ֆ ունեցող բառերը, իբրև փոխառյալ բառեր, գործածվել են XII—XIII դդ.՝ միջին հայերենում: Ֆրիկ անունը ևս, բնականաբար, այդ շրջանին է վերաբերում և առաջին անգամ էլ, ըստ երևույթին,

¹⁵ Ա. Մ կ ր տ շ յ ա ն, Նյութեր X—XVIII դարերի հայոց զգականության պատմության, պրակ Բ, Երևան, 1949, էջ 67:

¹⁶ Հ. Ա ճ ա ո յ ա ն, Նշվ. աշխ., հ. Ե, էջ 253:

¹⁷ Նույն տեղում, հ. Բ, Երևան, 1944, էջ 73:

¹⁸ Նույն տեղում, էջ 243: Այդ անձնանունները մեկնաբանելիս Հր. Աճառյանը դեռևս համոզված չի եղել, թե Ֆրիկը իրոք ո՞ր դարի բանաստեղծ է:

¹⁹ Մ. Ա բ ե ղ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 290, Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Ֆրիկի կյանքն ու ստեղծագործությունը («Ֆրիկ», Երևան, 1937, էջ 98—99), «Ֆրիկ», Երևան, 1944, էջ 5: Ի դեպ, այս աշխատություններում, ինչպես նաև Տիրայրի ուսումնասիրություններում Դոգոնոյ անունը սխալմամբ է Դոգոնայ ձևով, որ, իհարկե, ճիշտ չէ:

²⁰ Մ. Ա բ ե ղ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 290:

²¹ Ղ. Ա լ ի շ ա ն, Ցույիկը հայրենեաց, հ. Բ, Վենետիկ, 1870, էջ 125:

²² Այդ անվան հնչյունափոխական ձևերի մասին տե՛ս Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, էջ 244:

Ֆրիկին է շնորհվել: Բանաստեղծն իր տաղերում հաճախ է հիշում իր՝ Ֆրիկ անունը²³, որ մասնավոր դեպքերում կամ առանձին ձեռագրերում նաև Ֆիրիկ ձևով է պատահում. հմմտ. «է՛՝ Ֆրիկ, ըզմիտքըդ ժողովէ, լաւ իմացիր զինչ կու խօսես» (էջ 267), «Ֆրիկ ամ, ճարտար կացիր ու եղիր բարեաց դու մըշակ» (էջ 369), «Այլ տաղ վասն բարեգործութեան մարդկան ի Ֆիրիկէ աշխարհականէ ասացեալ» (էջ 357), «Ձայս կեանքս ուրացիր, Ֆրիկ (ծն. 33 C s l. կենքս ֆիրիկ), զանցաւորս իսկի մի՛ հոգալ» (էջ 360) և այլն²⁴:

XIII դ. եկող այդ Ֆրիկ (||Ֆիրիկ) անունն էլ ահա Ֆրեդերիկ կամ մի այլ օտար անվան ձեափոխութիւնը, «պարզապէս մի անձնանվան նվառացիւնն» համարելը բնավ հիմնավոր չէ. ֆ-ով սկսվող օտարածին անունը չէր կարող «կարճ» ժամանակում թափանցել ժողովրդի լեզվի մէջ և նվազական-փառաբանական ձև դառնալ: Բացի այդ, անձնանունները սովորաբար կրճատվում են վերջից կամ սկզբից, այնինչ Ֆրեդերիկ>Ֆդերիկ||Ֆտերիկ>Ֆդերիկ||Ֆտերիկ>Ֆրիկ ենթադրյալ ձևերի ներսում են կրճատումներ տեղի ունեցել, որոնք անհամոռնի են ու անհավանական:

Հիմնադրուի ու մերժելի է նաև ֆոռալ բնաձայնական բայի արմատից կազմված ֆուրիկ (>ֆուիկ> *ֆրիկ) բառից Ֆրիկ անվան ծագման տեսակետը: Ոմանք ի հաստատումն դրա, ճիշտ է, բերում են անգամ գրավոր վկայութիւններ («Ձէս տողեր մրտաք Շէնըքցի Օսմանի ֆուիկ հազար», «Այս է տապան մեծահոգի տաղասացին Տէր հաշատուր մեծ քահանայ արեւելին որ մականուն ֆրոֆրիկ ևս կոչեցին...»)²⁵, բայց դրանցով նրանք ավելի շատ հերքում, քան ապացուցում են իրենց տեսակետը, որովհետեւ հիշյալ վկայութիւններում ֆուիկ և ֆրոֆրիկ անվանումները նախ վերաբերում են ոչ թե Ֆրիկ բանաստեղծին, այլ մեկը՝ «Շէնըքցի Օսմանի հաղարին», իսկ մյուսը՝ «մեծ քահանայ արեւելի»՝ «Տէր հաշատուրին»: Երկրորդ՝ երկու դեպքում էլ թէ՛ մեկը՝ ֆուիկ-ը, թե՛ մյուսը՝ ֆրոֆրիկ-ը գործ են ածվում որոշակի անունների (հազար=շազար, հաշատուր) համար իբրեւ մակդիր-մականուն և, բնականաբար, երկրորդական նշանակութիւն են ստանում: Երրորդ՝ այդ մակդիր-մականունները ներկայացվում են ոչ թե ֆրիկ, այլ ֆուիկ, ֆրոֆրիկ, այսինքն՝ Բ-ի փոխարեն ո գրութիամբ, որը և բացառում է դրանց ծագումնաբանական կապը, ինչպէս նաև ֆուիկ (>ֆուիկ) բառի՝ ո>ւ հնչյունափոխութեան ենթարկվելու հնարավորութիւնը: Ավելացնենք, որ ֆուիկ (||ֆուիկ)-ից Ֆրիկ անվան առաջացումը չի արդարացվում նաև իմաստային առումով²⁶, քիչ քան բացատրութիւնը, թե բանաստեղծն իբր իր «թափառիկ, թափառական, աստանդական» կյանքին հարիր անուն է գործածել, նույնպէս համոզիչ չէ, որովհետեւ ֆուիկ||ֆուիկ (Բրուկի, հուլ. ֆուուացող, պտտվող, դարձադարձիկ) բառը նման նշանակութիւն չի արտահայտել և չի էլ արտահայտում:

Ուրեմն, բոլորովին այլ ծագում ունի Ֆրիկ անունը: Գրավոր աղբյուրներում դա թե՛ իբրեւ հատուկ, թե՛ իբրեւ հասարակ անուն է գործածվում: Ուրպէս հատուկ անուն առաջին անգամ ավանդվում է հենց ի դեմս բանաստեղծ Ֆրիկի և, այնուհետեւ, հանդիպում է երկու՝ XIV և XVI դդ. հետևյալ հիշատակարաններում. ա) «Ով որ Ֆրիկս յիշէ նայ ձեռամբ Յոհանէս Մեղայ-

²³ Ֆրիկի տաղերում, դրանց համաբարբառի տվյալների համաձայն, Ֆրիկ անունը գործ է ածվել 104 անգամ. ըստ որում, դա մեծ մասամբ հոլովվել է ներքին թեքման ա (Ֆրիկ-Ֆրիկան), մասնավոր դեպքերում՝ արտաքին թեքման ա- (Ֆրիկ-Ֆրիկայ), ի (Ֆրիկ-Ֆրիկին), ու (Ֆրիկ-Ֆրիկուս) հոլովումներով:

²⁴ Օրինակները բերում ենք Տիրայրի՝ «Ֆրիկ—Դիվանից» և ոչ թե 1941 թ. հրատարակված նրա «Բանաստեղծութիւններ» ժողովածուից, որ, դժբախտաբար, սխալաշատ է ու խռտելի:

²⁵ Տե՛ս առաջին օրինակի համար՝ Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 94, երկրորդ օրինակի համար՝ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Տիրայրի արխիվ, քղթ. № 131, վավ. 2:

²⁶ Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 95, Ա. Աբրահամյան, եջվ. աշխ., էջ 33, 34:

պարտի որդի Աթալպէի ով որ զողորմիսն պարգէն է նայ հաղարապատիքն առնուց ի քսէ և նմայ փառք յաւիտեանս զաւիտենից ամէն»²⁷. բ) «Ստացաւ [Մահտեսի Սահակն] զսա ի հալալ [ը]ռզակէ... յիշատակ իւրն և ծնաւդացն իւրոց Ֆրիկն, և կողակիցն, և բուրոշն...»²⁸:

Ֆրիկ բառը, իբրև հասարակ անուն, առաջին անգամ հանդիպում է նույնպես միջին հայերենում: Բժշկապետ Ամիրդովաթ Ամասիացին իր «Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկարան նիւթոց» (1482 թ.) աշխատութեան մեջ, մի առանձին՝ 3754-րդ բառահամարի դիմաց հիշատակում է Ֆրիկ բառը, «որ է եղի ցորենն, որ այրեն ի կրակն և ուտեն և թ. (ուրբն) ութմա կու ասէ» բացատրութեամբ²⁹:

Այդ հիման վրա Ֆրիկ բառի՝ իբրև հասարակ անվան, գոյությունն է հաստատում նաև Նոր Հայկազյան բառարանը, ՆՂԻ գլխաբառի տակ նշելով. «ՆՂԻ. ցորենն՝ որ այրեն ի կրակին և ուտեն. Ֆրիկ (ընդգծումը մերն է—Ա. Մ.). ութմա»³⁰:

Բայց առավել կարևոր և ուշագրավ է, որ Ֆրիկ բառը ոչ միայն միջին հայերենում է գործածվում, այլև պահպանվում է Կիլիկիայի բարբառում: Եվ, անշուշտ, դա է նկատի ունեցել բանասեր Տիրայրը, գրելով, որ «Ֆրիկ անունը հիշեցնող հասարակ գոյական մի անուն ունիք, պահպանված գավառի հեռավոր անկյուններում ապրող, մոռացված ժողովրդի բերանի մեջ, որ թերևս կարող լինի հանելուկը լուծելու նպաստել կամ լուծման բանալին դառնալ»:

Այդ բառն է Ֆրիկ, որ նշանակում է «նորահաս ցորենի հասկերից պատրաստված բովածք», որ «ուտում են դաշտի մշակներն ու հոտաղները...»³¹:

Այսպիսով՝ միանգամայն ակնհեր է, որ Ա. Ամասիացու հիշատակած ու Նոր Հայկազյան բառարանի կողմից վավերացված Ֆրիկ և բարբառային Ֆերիկ||Ֆրիկ բառերը նույն բառն են, որի ծագումը ևրկար ժամանակ հայտնի չի եղել հայագիտությանը: Եվ այժմ է՝ միայն պարզ դառնում, որ Ֆրիկ||Ֆրիկ (դեռահաս ցորենի բովված հասկերից պատրաստված աղանձ) բառը լիովին համընկնում է արաբերենի «عَلِي 1. تَيرَتِي, 2. فَارِيك (بلود, приготовляемое из поджаренной пшеницы)» բառին³² և փոխառյալ բառ է. Ֆերիկ||Ֆրիկ բառի փոխառյալ լինելու մասին է վկայում նաև Ն. Ակինյանի հայտնարեբաժ ձեռագրում եղած մի այլ հետաքրքրական հիշատակություն, որ մեջ ենք բերում ամբողջությամբ. «Զորուց և խաւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն. զոր թարգմանեցին Դաւիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լեզվէ»:

Յանուն Աստուծոյ ողորմածին: Կայր խալիֆա մի ի Պաղատա քաղաք, եւ ասէին անուն նորա Աստուլ Ազիզ: Աւր մի ելաւ ըստ սովորութեան իւրոյ եւ խաղար ի մոյտանն եւ երեկ մարդ մի, եւ ասեն զանուն նորա Դաւիթ Ֆէրեկ, եւ ծունր էած խալիֆային և ասէ. է՝ հղար խալիֆայ, քաղաք մի կայ ի հիւսուսոյ դէհն, անուն նորա պղընծէ քաղաք. մաւս ի ան քաղաքն են ան դեւքն, որ Սողոմոն ի կօերն էած եւ արճիճով զբերան կալաւ եւ մատնէհրեց, Կոչեց խալիֆան զԱմիր Մուսին եւ ասէ. Եկ գնայ գիտ զան դեւքն որ Սողոմոն զնդա-

²⁷ Հ. ր. Ա. անույան, Յուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910, էջ 46: Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 89:

²⁸ Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 33:

²⁹ Ամիրդովաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկարան նիւթոց, Վիեննա, 1927, էջ 623, հմտ. Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 90:

³⁰ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. առաջին, Վենետիկ, 1836, էջ 655:

³¹ Տիրայր, Ֆրիկ—Դիվան, էջ 90: Ի հաստատումն բարբառում Ֆերիկ||Ֆրիկ բառի գոյութեան, Տիրայրը վկայակոչում է իր «Գավառականի բառարան», ըստ երևույթին, ձեռագիր աշխատությունը:

³² Տե՛ս «Арабско-русский словарь», составил проф. Х. К. Баранов, М., 1957, с. 762.

նեկ է...»³³, Թվում է, թե Դալի («խենթ, խենթավուն, հանդուգն») Ֆէրեկ-ն այլ որ չէ, քան հենց բանաստեղծ Յրիկը, որ, ինչպես երևում է, հրապարակային մրցավեճերի է մասնակցել:

Արաբերենից փոխառյալ այդ հասարակ անվան նշանակությունն ունեցող բառից էլ ահա առաջ է եկել և ամենայն հավանականությամբ առաջին անգամ հենց բանաստեղծի համար է գործածվել Ֆրիկ հատուկ անունը:

Արդ՝ ինչ անուն է դա՝ բո՛ւն, թե գրական-բանաստեղծական: Շատերը՝ Ա. Զոպանյան, Վ. Բրյուսով, Տիրայր, Մ. Մկրյան և ուրիշներ, ինչպես հայտնի է, ենթադրաբար կամ հաստատաբար այն բանաստեղծի գրական անունն են համարում³⁴, եվ նրանք, իհարկե, չեն սխալվում. բանաստեղծ Յրիկը ոչ միայն իր ստեղծագործությունների յուրահատկությամբ ու բովանդակությամբ, այլև անվան, եթե կարելի է ասել, ձևով ու տեսքով, բնութիվով ու անսովորությամբ է տարբերվում միջնադարյան մյուս տաղասացներից՝ Կոստանդին Երզնկացուց և Խաչատուր Կեչառեցուց, Հովհաննէս Թլկուրանցուց և Մկրտիչ Նաղաշից, Առաքել Բաղիշեցուց և Գրիգորիս Աղթամարցուց, Հովասափ Սեբաստացուց և ուրիշներից: Իսկ դա արդեն յուրատեսակ փաստ է, և ցույց է տալիս, որ Ֆրիկ (||Ֆիրիկ) անունը բանաստեղծի ոչ թե բուն կամ իսկական, այլ գրական-բանաստեղծական անունն է: Յրիկը քաջածանոթ լինելով պարսկերենին ու արաբերենին, դրանցից ոչ միայն փոխառյալ շատ բառեր է գործածել իր տաղերում (օրինակ՝ ագիզ, ահապ, ամալ, անդիճեյ, բասար, քեստէ, գահալ, դալեհ, դովլաթ, դոստ, սիասաթ, սօֆ, փալիտ, ֆուֆր, ֆալաֆ, ֆուս և այլն), այլև հիշյալ **كفر** (=Ֆարիկ) արաբերեն փոխառյալ բառը իր համար գրական-բանաստեղծական անուն է դարձրել: Նա, իհարկե, այդպես է վարվել ոչ թե պատահականորեն կամ ֆրիկ բառի կարծության ու բարեհնչունության թելադրանքով, այլ առաջին հերթին ու հիմնադեպում նրա իմաստից ելնելով: Ֆրիկ բառը գրական-բանաստեղծական անուն ընտրելով՝ Յրիկն իր կյանքը նմանեցրել է եղիի՝ նորահաս ցորենի բուլած հասակներից պատրաստած աղանձի կամ խանձված հորահաս ցորենի և կամեցել այդպիսով ևս արտահայտել իր հոգեկան տվյալանքներն ու տառապանքները, դառն ու ծանր վիճակը: Եվ պատահական չէ բնավ, որ մի բանաստեղծության մեջ եթե նա իրո՞ք իրեն ուղղակի «աղնձած սերմի» հետ է համեմատում, ասելով՝ «Ո՛յ ծլիմ, ոչ բուսանիմ, զերդ զաղընձած սերմ եմ գերիս»³⁵, ապա մի այլ բանաստեղծության մեջ էլ աստծուն դիմելով՝ «բացասական» հատկանիշով փաստորեն իր կեղծանվան մասին է հուշում:

Հայս անարժանս արժանացո՛ք քո սուրբ տեսլեանդ հրաշալի,
ես իմ քո մեղաւոր ծառայն, Ֆրիկ անուն յոյժ աղտեղի³⁶:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ XIII դ. նշանավոր բանաստեղծ Յրիկի անունը ծագում է արաբերեն **كفر** (Ֆարիկ) բառից և իսկապե՛ս նրա ոչ թե բուն, այլ գրական-բանաստեղծական անունն է:

33 Չ. Ն եր օ ս ս վ. Ա կ ի ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 24:

34 Այդ մասին տե՛ս Ա. Զոպանյան, Հայ էջեր. Փարիզ, 1912, էջ 19, «Поэзия Арменни», под редакцией В. Брюсова, М., 1916, с. 49; Տ ի ր ա յ ր, Յրիկ—Դիվան, էջ 85, Մ. Մ կր յ ա ն, նշվ. աշխ., էջ 96: Նախապես Յրիկը դոսական անուն (կեղծանուն) է համարել նաև Հ. Պոտուրյանը, վերագրելով այն, սակայն, Հովհաննէս Պուլզին կամ ավելի շատ՝ Խաչատուր Կեչառեցուն (տե՛ս Տ իր ա յր, Յրիկ—Դիվան, էջ 4—5, նաև՝ Մ. Թ. Ա վ-դ ա լ բ գ յ ա ն, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 25—28):

35 Տ իր ա յր, Յրիկ—Դիվան, էջ 264:

36 Նույն տեղում, էջ 335:

О ПРОИСХОЖДЕНИИ ИМЕНИ ФРИКА

АЛЕКСАНДР МАРКАРЯН

Резюме

В армянской филологии о происхождении имени знаменитого поэта XIII в. Фрика высказаны разные мнения и гипотезы, которые подробно представлены филологом Тирайром в его известной книге «Фрик-Диван». При этом особого внимания заслуживает то, что собственное имя *Ֆրիկ* (Фрик) сравнивается с употребляемым в диалекте нарицательным именем *ֆարիկ*/*ֆրիկ* («поджарка колосьев неспелой пшеницы»). Факты показывают, что эти имена являются одним и тем же словом, которое восходит к арабскому слову *فريك* (1. тертый; 2. Фарик—блюдо, приготовляемое из поджаренной пшеницы), и, действительно, как псевдоним употреблялось самим поэтом.